



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Նպատակ

Խթանել Արմավիր և Արագածոտն մարզերի Գետաշեն և Շամիրամ համայնքների աշակերտների հետաքրքրությունը բնագիտական առարկաների հանդեպ:

Գործողություններ

- Կառուցել ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա Արմավիր մարզի Գետաշեն համայնքի դպրոցում:
- Կառուցել կենսաբանության և քիմիայի լաբորատորիա Արագածոտն մարզի Շամիրամ համայնքի դպրոցում:

Ծրագրի նկարագրությունը

Կրթության հնարավորությունը կարևոր նախապայման է յուրաքանչյուր ընտանիքի համար: Չնայած նրան, որ Հայաստանում պետական դպրոցները անվճար են, վերջիններս ուսուցիչների և դասավարման համար անհրաժեշտ դասասենյակների պակաս ունեն: Արդյունքում աշակերտները զրկվում են հավասարապես որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից: Այս խնդիրը հատկապես արդիական է Երևանից դուրս գտնվող դպրոցների համար:

«Դասավանդի՛ր Հայաստան»-ը, որը հանդիսանում է «Դասավանդի՛ր բոլորի համար»-ի (Teach for All) անդամ, նպատակ ունի լուծել այս խնդիրը և աշակերտներին ապահովելով հավասարազոր կրթելու հնարավորություն, հավաքագրելով երիտասարդ մասնագետների, ովքեր ամենաքիչը երկու տարի կդասավանդեն համայնքային դպրոցներում: Երեք տարվա ընթացքում «Դասավանդի՛ր, Հայաստան» նախագծի շրջանակներում, տասնյակ երիտասարդներ՝ աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի և անգլերեն լեզվի ուսուցիչներ, լրացրեցին այս բացը Հայաստանի մարզեր բերելով բարձրորակ կրթություն:

Լուսինե Վարդումյանը դասավանդում է Արմավիր մարզի Գետաշեն գյուղի դպրոցում: Գյուղը Երևանից 70 կմ հեռավորության վրա է գտնվում, թուրքական սահմանին մոտ: Շատ ընտանիքներ արտագաղթել են գյուղից, ինչը կրճատել է ներկայիս բնակչության թիվը՝ 2704-ից դարձնելով 1900: Չնայած գյուղը փոքր է, դպրոցը համեմատաբար մեծ թվով աշակերտներ ունի. Ընդհանուր 248 հոգի, որոնցից 98-ը անցնում են ֆիզիկայի և քիմիայի կանոնավոր դասընթացներ: Մինչ դպրոցը չունի որևէ ընթացիկ գիտական լաբորատորիա, բնագիտական այս առարկաները միայն տեսականորեն են դասավանդվում: Սա ազդում է բնագիտական առարկաների հանդեպ աշակերտների հետաքրքրության վրա և արդյունքում շատ քիչ քանակությամբ շրջանավարտներ են շարունակում ուսումը բնագիտության ոլորտում: Լուսինեն նպատակ ունի այս դպրոցում ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա հիմնել, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան սովորել առարկաները սեփական փորձարկումների հիման վրա:

Վեներա Աբովյանը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ծրագրում ընդգրկված մեկ այլ երիտասարդ է, ով Արագածոտն մարզի Շամիրամ գյուղի դպրոցում կենսաբանություն և քիմիա է դասավանդում: Շամիրամ գյուղի բնակչությունը կազմում է 2144 մարդ, որոնցից 91-ը դպրոցական տարիքի երեխաներ են (7-17 տարեկան): Տարիներ շարունակ դպրոցի երեխաները կենսաբանության և քիմիայի դասընթացներ չեն ունեցել ուսուցիչ չունենալու պատճառով: Հետո հայտնվեց Վեներան: Վեներան նշում է, որ երեխաների համար շատ դժվար է այս երկու ամբողջովին տարբեր, նոր առարկաները սովորել միայն դասագրքերով, առանց լաբորատորիայի, որտեղ նրանք ամեն ինչ կարող էին տեսնել գործնական աշխատանքի և փորձարկումների միջոցով: Վեներայի կարծիքով լաբորատորիաների առկայությունը նշանակալից ներդրում կլինի դպրոցական երեխաների կրթության բարելավման հարցում:

«Այո»-ն որոշեց համագործակցել Լուսինեի և Վեներայի հետ՝ օգնելով սրանց հասնել ընդհանուր նպատակի: Այս երկու դպրոցներում բնագիտական լաբորատորիաներ կառուցելով «Այո»-ն կնպաստի երեխաների բարձրորակ կրթության ապահովմանը: Լաբորատորիաները կօգնեն երկու դպրոցների ռեսուրսների բարելավմանը և կմեծացնեն կրթության ծարավ ունեցող երեխաների հետաքրքրությունը: Արդյունքում շատերը հնարավոր է և հետագայում ընտրեն հենց բնագիտության ասպարեզը և իրենց ներդրումը ունենան Հայաստանի զարգացման մեջ:

Միացե՛ք մեզ և ասեք Այո՛ երեխաների լուսավոր կրթական հեռանկարներին:



Ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա Արմավիր մարզի Գետաշեն համայնքի դպրոցում

Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր

| ԻՆՉ | ՔԱՆԱԿ | Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈՒԼԱՐ |
|------------------------|--------|---------------------|---------------------|------------------------|
| Ցեմենտ | 6 տուփ | 3,500 | 21,000 | \$43.75 |
| Գիպսոնիտ | 8 տուփ | 2,500 | 20,000 | \$41.67 |
| Պատուհաններ | 10 քմ | 28,000 | 280,000 | \$583.33 |
| Ցեփամածիկ | 18 գ/մ | 800 | 14,400 | \$30.00 |
| Ծեփամածուկով հարդարում | 4 տուփ | 4,500 | 38,000 | \$79.17 |
| Հոսանքի աքսեսուարներ | 15 հատ | 3,400 | 51,000 | \$106.25 |
| Լուսամուտագոգ | 6 գ/մ | 1,800 | 10,800 | \$22.50 |
| Լինոլեում հաստ | 54 քմ | 4,000 | 216,000 | \$450.00 |
| Նախաներկ | 10 լ | 1,000 | 10,000 | \$20.83 |
| Ներկ | 10 լ | 1,300 | 13,000 | \$27.08 |
| Ներկել | 120 քմ | 150 | 18,000 | \$37.50 |
| Ջրի խողովակ | 15 մ | 600 | 9,000 | \$18.75 |
| Խողովակ ջրահեռացման | 15 մ | 800 | 12,000 | \$25.00 |
| Լաբորատոր սեղան | 2 հատ | 25,000 | 50,000 | \$104.17 |
| Աթոռ շարժական | 4 հատ | 16,000 | 64,000 | \$133.33 |
| Գրատախտակ | 1 հատ | 25,000 | 25,000 | \$52.08 |
| Շարժական գրատախտակ | 1 հատ | 15,000 | 15,000 | \$31.25 |
| Գրապահարան պատրաստի | 6 քմ | 45,000 | 270,000 | \$562.50 |
| Շերտավարագույր | 12 քմ | 5,500 | 66,000 | \$137.50 |

Առարկայական նյութերի եւ պարագաների բյուջե

| ԻՆՉ | ՔԱՆԱԿ | Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---------------------------|-------------|---------------------|---------------------|-----------------------|
| Մանրադիտակ | 1 հատ | 68,000 | 68,000 | \$141.67 |
| Խոշորացույց | 5 հատ | 800 | 4,000 | \$8.33 |
| Մանրապատրաստուկներ | 2 հատ | 32,000 | 64,000 | \$133.33 |
| Հերբարիում | 2 տուփ | 3,000 | 6,000 | \$12.50 |
| Կոլբաներ | 5 հատ | 8,000 | 40,000 | \$83.33 |
| Ճենապակյա թասեր | 1 հատ | 19,000 | 19,000 | \$39.58 |
| Փորձանոթներ | 100 հատ | 350 | 35,000 | \$72.92 |
| Լաբարատոր բաժակներ | 1 հատ | 33,000 | 33,000 | \$68.75 |
| Շնկածեւ ձագար | 1 հատ | 43,000 | 43,000 | \$89.58 |
| Էլեկտրոնային կշեռք | 5 հատ | 3,000 | 15,000 | \$31.25 |
| Ծանրոցներ | 6 հատ | 2,000 | 12,000 | \$25.00 |
| Սկուտեղներ | 5 հատ | 1,200 | 6,000 | \$12.50 |
| Գազ ստանալու սարք | 5 հատ | 3,000 | 15,000 | \$31.25 |
| Սպիրտայրոց | 3 հատ | 1,500 | 4,500 | \$9.38 |
| Հեղուկային ջերմաչափ | 3 հատ | 1,500 | 4,500 | \$9.38 |
| Սպիրտ | 5 հատ | 800 | 4,000 | \$8.33 |
| Քրոմի միացություններ | 1 հատ | 3,500 | 3,500 | \$7.29 |
| Ինդիկատորներ | 2 հատ | 6,000 | 12,000 | \$25.00 |
| Անօրգանական նյութեր 1 | 1 հատ | 7,500 | 7,500 | \$15.63 |
| Անօրգանական նյութեր 2 | 1 տուփ | 3,000 | 3,000 | \$6.25 |
| Ֆիլտրի թուղթ | 3 հատ | 1,000 | 3,000 | \$6.25 |
| Պիպետներ | 100 հատ | 30 | 3,000 | \$6.25 |
| Սրվակ | 50 հատ | 200 | 10,000 | \$20.83 |
| Չափաբաժակներ հավաքածու | 1 տուփ | 7,300 | 7,300 | \$15.21 |
| Գդալիկ այլումինե | 5 հատ | 560 | 2,800 | \$5.83 |
| Ձեռնոց | 50 հատ | 100 | 500 | \$10.42 |
| Գոգնոց | 29 հատ | 1,500 | 43,500 | \$90.63 |
| Ռետինե խցան | 20 հատ | 100 | 2,000 | \$4.17 |
| Բռնիչներ | 10 հատ | 500 | 5,000 | \$10.42 |
| Ապակյա ձողեր | 20 հատ | 500 | 10,000 | \$20.83 |
| Լաբարատոր ամրակալ | 6 հատ | 3,000 | 18,000 | \$37.50 |
| Քանոնների հավաքածու | 1 հավաքածու | 9,000 | 9,000 | \$18.75 |
| Մագնիսե ամրակներ | 10 հատ | 180 | 1,800 | \$3.75 |
| Արքիմեդի դույլիկ ընդամենը | 1 հավաքածու | 13,000 | 13,000 | \$27.08 |
| Տրանսպորտ | | | 44,000 | \$91.67 |

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$3,707.50

**Կենսաբանության եւ ֆիզիկայի լաբորատորիա
Արագածոտն մարզի Շամիրամ համայնքի դպրոցում**

Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր

| ԻՆՉ | Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|-------------------------------------|---------------------|---------------------|-----------------------|
| Պատերի մաքրում, հարթեցում | 3,070 | 3,3100 | \$68.96 |
| Պատերի ներկում եւ անհրաժեշտ նյութեր | 1,500 | 27,000 | \$56.25 |
| Հատակի ներկում եւ անհրաժեշտ նյութեր | 1,500 | 104,700 | \$218.13 |

Առարկայական նյութերի եւ պարագաների բյուջե

| ԻՆՉ | ՔԱՆԱԿ | Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|------------------------|--------|---------------------|---------------------|-----------------------|
| Մանրադիտակ | 3 հատ | 68,000 | 204,000 | \$425.00 |
| Խոշորացույց | 5 հատ | 800 | 4,000 | \$8.33 |
| Մանրապատրաստուկներ | 2 տուփ | 32,000 | 64,000 | \$133.33 |
| Հերբարիում | 2 տուփ | 3,000 | 6,000 | \$12.50 |
| Ուսումնական նյութ | 2 տուփ | 4,000 | 8,000 | \$16.67 |
| Աչքի մոդել | 1 հատ | 23,000 | 23,000 | \$47.92 |
| Սրտի մոդել | 1 հատ | 15,000 | 15,000 | \$31.25 |
| Մարդու կմախք | 1 հատ | 40,000 | 40,000 | \$83.33 |
| Մարդու կառ. մոդել | 1 հատ | 45,000 | 45,000 | \$93.75 |
| Էլեկտրոնային կշեռք | 5 հատ | 3,000 | 15,000 | \$31.25 |
| Շտատիվ | 5 հատ | 3,000 | 15,000 | \$31.25 |
| Սկուտեղներ | 5 հատ | 1,200 | 6,000 | \$12.50 |
| Գազ ստանալու սարք | 5 հատ | 3,000 | 15,000 | \$31.25 |
| Սպիրտայրոց | 3 հատ | 1,500 | 4,500 | \$9.38 |
| Հեղուկային ջերմաչափ | 3 հատ | 1,500 | 4,500 | \$9.38 |
| Սպիրտ | 2լ | 800 | 4,000 | \$8.33 |
| Քրոմի միացություններ | 1 տուփ | 3,500 | 3,500 | \$7.29 |
| Ինդիկատորներ | 1 տուփ | 6,000 | 6,000 | \$12.50 |
| Անօրգանական նյութեր 1 | 1 տուփ | 7,500 | 7,500 | \$15.63 |
| Անօրգանական նյութեր 2 | 1 տուփ | 3,000 | 3,000 | \$6.25 |
| Ֆիլտրի թուղթ | 3 տուփ | 1,000 | 3,000 | \$6.25 |
| Սրվակներ | 50 հատ | 200 | 10,000 | \$20.83 |
| Գոգնոց | 15 հատ | 1,200 | 18,000 | \$37.50 |
| Չափաբաժակներ հավաքածու | 1 տուփ | 7,300 | 7,300 | \$15.21 |
| Գդալիկ այլումինե | 5 հատ | 560 | 2,800 | \$5.83 |
| Ձեռնոց | 50 հատ | 100 | 5,000 | \$10.42 |
| Սեղան | 9 հատ | 25,000 | 225,000 | \$468.75 |
| Գրատախտակ | 1 հատ | 20,000 | 20,000 | \$41.67 |
| Աթոռ | 16 հատ | 10,000 | 160,000 | \$333.33 |
| Պահարան առանց դռների | 1 հատ | 30,000 | 30,000 | \$62.50 |
| Պահարան դռներով | 1 հատ | 40,000 | 40,000 | \$83.33 |
| Լվացարան | 1 հատ | 35,000 | 35,000 | \$72.92 |
| Շերտավարագույր | 11մ | 5500 | 60,500 | \$126.04 |
| Տրանսպորտ | | | 40,000 | \$83.33 |

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$3,081.67

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$6,050